ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№__5404-Ա___ « 05 » նոյեմբերի 2026թ.

ՄԱՔՍԻՄ ԳԱՐԵԳԻՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասի 4-րդ կետով, 112-րդ հոդվածով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Մաքսիմ Գաբրիելյանի դիմումը՝

1. Մաքսիմ Գարեգինի Գաբրիելյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 6-ից ազատել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պաշտոնից:

2.Առաջարկել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին՝ ապահովել վերջնահաշվարկի վճարումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և աշխատանքային վերջին օր համարել 2026 թվականի նոյեմբերի 5-ը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ